

## ՅԱՐԴԱՆՔ, ՊԱՏԻՒ



Նէ է նշանակում և կամ ցոյց տալս յարգանք, պատիւ բառերը։ Այս հարցին դրական և որոշ պատասխան տալը կապ ունի ուրիշ հարցերի պատասխանի հետ։ Նախ քան ամբողջ հարցին պատասխան տալը բաւականանք միայն հետևեալ հարցին պատասխանելու։ Ի՞նչ է պատիւր։ Պատիւը է մարդկանց դատաստանի, վճռի ամփոփումը մեր բարոյական արժանաւորութեան և նշանակութեան համար։ Մարգս կարող է լաւ և վատ, բարի ու չար, յարգանքի և ատելութեան արժանանալայն ժամանակ, երբ նա ընկնում է իւր շրջապատողների քննադատութեան տակ։ Մարդկանց դատաստանը զօրաւոր է և խիստ։ և ոչ մի ընտանիքի, հասարակութեան, ժողովրդի անդամ անկարող է իւր կեանքի ընթացքում, իւր գործերի մէջ մի այդպիսի դատաստանից, քննադատութիւնից իրան հեռու և ազատ պահել։ Այդ իսկ պատճառով իւրաքանչ չիւր մարդու վերալ մի բարոյական, ընկերական և մարդկալին պահանջ, պարտք կալ, որ նա պիտի աշխա-

տէ իւր անձնական լարաբերութիւնների և գործերի մէջ իրան դէպի իդէալն ուղղելու և նսրա մէջ փնտռելու իւր պատիւը, լարգանքը։ Բայց դժբաղդաբար ալդ գաղափարը ամեն մարդու մէջ միւսնոյն կերպով և աստիճանով չի երևում։ Ոմանք ձեռք են բերում իրանց համար ոլժ, զօրութիւն, ոմանք դրամ, հարստութիւն։ մի երրորդը իշխելու, հարստահարելու իրաւունք և այսպիսով աշխատում են թուլերին այն դրութեան հասցնել, որ ակամայից ստիպմամբ առերես իրանց պատուեն, լարգեն և իրանց առաջ խունկ ծխեն։ Շատ քնական է, որ այսպիսի դատով, քննադատողական ձեռք չի կարելի ճշմարիտ պատիւը ներկայացնել իւր բոլոր գոլներով ու էութեամբ։

Մարդս տեսնում է միայն այն ամենը, ինչոր իւր աչքի առաջն է. իսկ Աստուած տեսնում է այն՝ ինչոր մարդկանց սրտերումն է։ Ճշմարիտ կարծիքը, համոզումը պէտք է դատի քննականութեան հետ համաձայն լինի, ներդաշնակութիւն, կապ կազմէ, և ալդ կ'երևալ մեր մէջ այն ժամանակ, երբ մենք մեր գործերի ու խօսքերի մէջ բարոյական գաղափարներով առաջնորդուենք և գործենք մի այնպիսի գործ, որ թէ մարդկանց և թէ Աստուծուն հաճելի լինի։ Մի ընկերութիւն, հասարակութիւն միայն այն ժամանակ կարող է իւր մարդկանցը արտաքուստ և ներքուստ քննել, դատել, երբ նա լցուած է բարոյական գաղափարներով, երբ նա դատելու ընդունակութիւն ունի և երբ նա գիտակցաբար է ընթանում իւր գործերի մէջ։

Նշանաւոր մանկավարժ Ներբարտը մի այսպիսի ընկերութեանը, հասարակութեանը անուանում է «կենդանի, գիտակցական ընկերութիւն»։ Մարդուս ներքին և արտաքին պատուաթեր նշանները պէտք է ներդաշնակ ուղղութեամբ ընթանան, որ կարելի լինի նորա

կատարած գործերով իմանալ նորա ով և ինչպիսի ան-  
հատ լինելը։ Նատ անգամ մեր առօրեայ ընտանեկան,  
հասարակական և դպրոցական կեանքում պատա-  
հում է, որ մենք պատուի և յարգանքի ցոյցեր ենք  
անում դէպի այնպիսի մի մարդ, որը արժէք չունի դո-  
րան, որը իւր կատարած գործերով և անցեալ կեան-  
քով մի տխուր պատկեր է ներկալացնում։ Այսպիսի ժա-  
մանակ երբ պատիւը պատահականութեամբ է չափում,  
այն ժամանակ նա յարաբերական պատիւ է դառնում։  
Այնտեղ է երեւում մարդուս կատարեալ պատիւը, փառ-  
քը, երբ նա իւր բնաւորութեամբ, ազնւութեամբ, սի-  
րով, անաշառութեամբ և գործունէութեամբ փայլում  
է իր շրջապատողների մէջ որպէս մի լուսաւոր ջահ։ մի  
խօսքով այն ժամանակ, երբ նրա ներքին և արտաքին  
պատիւները խաղում են միմեանց։ Պատիւը, յարգան-  
քը մարդս ձեռք է բերում երկար ժամանակի ընթաց-  
քում, ծանր ու ազնիւ տշխատանքներից լետոյ։ Նա մի  
բարոյական բարքի, հարստութիւն է, որին առանց լինա-  
սելու չի կարելի դիպչել։

Զարախօսում եմ և զրպարտում իզուր տեղը մի  
մարդու և դորանով ոչ թէ պատիւս է աւելանում, այլ  
տուժում է անձս և ինձ ձգում անպատճութեան մէջ  
և այդ միջոցով ես չեմ ձգում մի ճշմարիտ գիտակ-  
ցութեան, բաղդաւորութեան, այլ աւելի ինձ ան-  
բաղդացնում։ Այդ իսկ պատճառով կրթութիւնը  
վատահամբաւութեան համար մի անհրաժեշտ ջախ-  
ջախիչ պահանջ է, և իւր էական միջոցն է  
յարգանք, մեծարանք զարթեցնել մարդկանց սրտերում  
և բարոյագիտութեան ճշմարիտ հիմքերի վերալ հիմ-  
նուած յարգանքի պատուի բուն սկզբունքները ցոյց  
տալ։ Պատիւը, յարգանքը մարմնական գեղեցկութիւ-  
նից չէ կախուած։ Նա չէ կապուած գեղեցիկ զգեստնե-

ըի հետ և նա գործ չունի հարստութեան և մարդկա-  
լին զանազան բարձր աստիճանների, դրութեան, դիր-  
քի հետ: Պատուի, փառքի արժանանալու համար նախ  
և առաջ պիտի տուժել, վշտերի, զրկանքների և անար-  
դանքների դիմանալ: Ճշմարտութեան և պատուի գա-  
ղափարը երեխանների մէջ կարելի է զարթեցնել կրօնի  
և պատմութեան դասաւանդման միջոցով: Ուսուցիչը և  
կամ դաստիարակը իւր բոլոր գործերով, կեանքով պի-  
տի ճշմարիտ ուղեցոյց լինի երեխանների մէջ պատուի  
զգացմունք զարթեցնել. նա չպէտք է մոռանայ լարգե-  
լու, պատուելու իւր սաններին և իւր ալդ ընթացքով  
նա արժանանալու է նոցա լարգանքին, պատուին:

Ընտանիքում գերդաստանական կարգավահութիւ-  
նը, գլրոցում գպրոցական կրթական կեանքը իրանց ամբողջ  
էութեամբ Աստուծոյ վսեմութեան, մեծութեան իրաւունք.  
Ները ճանաչեցնել տալով անհատի մէջ լարգանքի, պա-  
տուի սէր են զարթեցնում: Գերդաստանում հայրը պարտա-  
ւոր է իւր ամբողջ խնամքը ուշադրութիւնը այն բա-  
նի վերայ դարձնել, որ մայրը լարգուի, պատուի իւր  
որդինների կողմից և նոյնը փոխադարձաբար մայրը պի-  
տի ձգտէ հօր վերաբերմամբ կատարելու: Եթէ որ ու-  
սուցիչների և առհասարակ դաստիարակիչների մէջ կեն-  
դանի է ճշմարիտ լարգանքի գաղափարը, այն ժամա-  
նակ անպատճառ նոցա սանները, որդիքը մեծանալուց  
կրթուելուց լետոյ պատուելու են եկեղեցական և մարմ-  
նական իշխանութիւններին, դպրոցի մեծերին, իրանց  
դաստիարակիչներին, հեղինակաւոր անձանց և իրանց  
ընկերներին, մերձաւորին: Ըստ քրիստոնէական հայե-  
ցողութեան ամբողջ բնութիւնը Աստուծոյ պատիւն ու  
լարգանքն են արտալայտում և մեզ նրա ճշմարտութիւ-  
նը, իսկութիւնը ցոյց տալիս: Ազնուաբար բառը ցոյց է  
տալիս մարդու գործունէութեան, գիտակցութեան ա-

մենաբարձր աստիճանը։ Որքան որ մարդկալին գիտակ-  
ցութիւնը զարթնում է, նոյնքան մարդուս հոգին, սիր-  
տը ձգտում է հասնելու ալդ բարձր բարիքին։ Որտեղ  
որ մարդուս ազնւութիւնը, պատիւը, յարգանքը կո-  
րած է, ալնտեղ կորած է և ոչնչացած ամեն բան։ Ազ-  
նիւ լինել կ'նշանակէ բարոյապէս և մտաւորապէս բարձր  
կանգնել։ Մարդու խօսելով մի անժի, կամքի զիտակ-  
ցութեան, քննադատութեան, քնատրութեան մասին,  
ի նկատի ունի նորա ազնւութիւնը, որը ոչ ալլ ինչ է,  
եթէ ոչ մի պատուիրան նորա ամբողջ հոգեկան և մտա-  
ւոր կեանքի։ Ազնւութիւնը կեղծաւորութեան հակա-  
պատկերն է, ուր զգացմունքը, մտքերը և կամքը գործ  
չունին արտայատելու ճշմարտութիւնը։ Կեղծաւորը  
ցուցամոլութեան պատճառով աշխատում է իրան դու-  
րեկան դարձնել, նա հեռու է փախչում ճշմարտութիւ-  
նից, արդարութիւնից։ իսկ ազնւութիւնը ընդհակառա-  
կը ձգտում է աւելի երախտագիտութեան, պատուի,  
յարգանաց, սիրոյ. և առանց մարդկանց դուր գալու զը-  
զուելի նպատակը ի նկատի ունենալու, բացարձակ ան-  
կողմնապահ կողմերով և ակնյայտնի պարզութեամբ ա-  
ւելի ճշմարտութեան է դիմում։ Նա իրան ներկայացնում  
է և ցոլց տալիս ալնպէս որպէս կալ, և ոչ թէ դիմա-  
կով աշխատում ծածկել իւր իսկական գէմքը։ Ազնւու-  
թեան ամենագլխաւոր որպիսութիւնը, յատկութիւնը է  
ճշմարտասիրութիւնը։ ճշմարիտը նա է, ով որ իր բո-  
լոր գործերի և մտածմանց մէջ երեսում է իւր անկեղծ  
կողմերով։ Նա ճշմարտութեամբ ղեկավարում է իւր  
գործերը, խօսքերը դէպի արդարասիրութիւն։ Կըթա-  
կան գործում ամեն տեղ մեծ դեր է կատարում կըթո-  
ղի կամ դասակարակչի անձնաւորութիւնը, նրա լաւ ու  
վատ յատկութիւնները։ Եթէ դաստիարակը ազնիւ է,  
նոյնը լինելու են նորա աշակերտները։ Ընդհանրապէս

ստախօս և խաբերալ ծնողները ունեն ստախօս և խաբերայ որդիք. գող հալրերը, դաստիարակիչները գող որդիք և սաներ. իսկ ընդհակառակը ազնիւները ունենում են ազնիւ և պիտանի պտուղներ.

Տղալոց կրթութեան գործում աւելի լաւ է գիտութիւն աւանդելու և քաղաքավարութեան մէջ հազար անգամ սխալներ անենք, քան թէ միանգամ անարդարութիւն, անիրաւութիւն և անազնւութիւն, քանի որ առաջին գէպքում կարելի է սխալը հեշտութեամբ ուղղել, իսկ վերջին գէպքում անհնարին է ու գժուար. Ըստ Ցվինգլինի մանկանց՝ խաղը և մարդկանց՝ դրամը անազնիւ է դարձնում և փչացնում նոցա բնաւորութիւնը:

Ազնւութիւնը դաստիարակութեան և այն էլ ճշշմարիտ և խելացի դաստիարակութեան գլուխն է կազմում. նա է յառաջացնում մարդուս սրտի մէջ յարգանքի և պատուի գաղափարը. Ազնւութեան, յարգանքի և պատուի կրթութեան համար չկայ մի այլ աւելի լաւ միջոց, քան հին կտակարանի դաւանաբանութեանց պատուիրանները, կրօնական փիլիսոփայութիւնը և բարոյագիտութիւնը:

ԱՐԾԱԿ ՍԱՐԿԱԽԱԴԻ

